# Հայկական Բժշկական Ասոցիացիա
# Армянская Медицинская Ассоциация
# Armenian Medical Association

30.03.2020

ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հարգելի գործընկերներ,

Հուսամ առողջ եք և այս դժվար օրերին եռանդն ու լավատեսությունը չեն լքում ձեզ և ձեր մերձավորներին:

Հետաքրքիր, փոփոխական և լարված ժամանակներում ենք ապրում և աշխատում: Նման վիճակում ավելի լավ են երևում արված և չարված գործերը, մարդկային հարաբերություններն ու դավանած արժեքները:

Այսօր բոլորը դրական են արտահայտվում բժիշկների և առողջապահության վերաբերերյալ, մեծարում են և կարևորում: Նախկինում այդքան էլ դրական չէր, երբեմն նաև խնդրահարույց էր, վաղը չգիտենք ինչ կլինի: Մեր գործընկերներից շատերը բազմաթիվ գրառումներ են արել և կոչեր են հնչեցրել փոփոխական վերաբերմունքի և այլնի վերաբերյալ, հետևաբար կարիք չկա այդ մասին ավելի մանրամասն ներկայացնել:

Մեր հուշագրի շրջանակներում նախատեսվում է կոնսոլիդացիոն գործընթաց սկսել մասնագիտական ասոցիացիաների միջև, և կարծում եմ հիմա օրվա հրամայական է մեկ ընդհանուր մասնագիտական սոցիացիաների ասոցիացիայի ձևավորումը:

Ինչո՞ւ մասնագիտական ասոցիացիաների ասոցիացիա, և ոչ թե անհատ բժիշկների կազմակերպություն, որովհետև, եթե լինի ոչ թե ասոցիացիաների միավորում, այլ բոլոր անհատ բժիշկներին միավորող կառույց, ապա դա կթուլացնի մասնագիտական ասոցիացիաներին և շահերի բախում կառաջացնի մասնագիտական ասոցիացիաների հետ, քանի որ մեկ մարդը ստիպված կլինի երկու մասնագիտական կազմակերպության անդամ լինել, երկու տեղ անդամավճար մուծել և այլն, ինչպես նաև չկա պարզապես բժիշկ, այլ բոլորն էլ ունեն նեղ մասնագիտություն և տվյալ մասնագիտական ասոցիացիայի անդամ են:

Որպես միավորող կառույց ամենից հարմարը Հայկական բժշկական ասոցիացիան (ՀԲԱ) է, քանի որ

- միակն է Հայաստանում, որ անդամակցում է Համաշխարհային Բժշկական ասոցիացիային
- երկար տարիներ գործում է ոլորտում, ունի միավորման հաջող փորձ (ստեղծվել է 2002 ին և կարճ ժամանակ հետո միավորել է Հայ բժիշկների միությանը)
- չունի նեղ մասնագիտական ուղղվածություն, չի կապված որևէ քաղաքական ուժի կամ անհատի հետ
- ղեկավար կազմն էլ քաջ ծանոթ է բոլորիդ:

Բացի դա, միավորման պարագայում նաև օբյեկտիվ մեխանիզմներ կներդրվեն, որպեսզի նորացված ՀԲԱ-ն զերծ լինի սուբյեկտիվությունից, ավտորիտարիզմից ու բազմաթիվ այլ անցանկալի երևույթներից. դրա երաշխիքն են լինելու ՀԲԱ ներկա ղեկավար կազմը՝ իմ նախագահությամբ, ձեր բոլորի պատվախնդրությունը և ստորև ներկայացվող պարտադիր պայմանները.

1. **<u>նախագահի երկու տարին մեկ փոփոխվելը՝ Ընտրված նախագահի ինստիտուտի ներդրմամբ</u>**, այս դեպքում, ինչպեսև շատ ասոցիացիացիաներում, երկու տարի հետո Ընտրված նախագահը մեխանիկորեն նախագահ է դառնում և ոչ թե նոր նախագահ, այլ նոր Ընտված նախագահ է ընտրվում: Այսինքն, կանոնադրության ուժով, նորացված ՀԲԱ բոլոր նախագահները կպաշտոնավարեն երկու տարի ժամկետով: Սա կբացառի որևէ սուբյեկտիվ ազդեցություն, որևէ

մեկի իշխանության տարածում մնացածների վրա և որևէ մեկի անձնական ամբիցիայի բավարարման հետ կապված հարցերը: Սա չի լինում, որ ինչ որ մեկն ասում է «եկեք միավորվենք իմ ղեկավարության տակ», ինչը գործնականում անհնար է, այլ միավորվում ենք՝ ձևավորելով այնպիսի համակարգ, որտեղ ղեկավարը ընդամենը բոլորի կողմից ընդունված ծրագրի կատարողն է լինում՝ պարտադիր ֆիքսված երկու տարի ժամկետով: Առաջին իսկ համագումարում հաստատում ենք ՀԲԱ նոր կանոնադրություն և ընտրում ենք նոր Ընտրված նախագահ, ով երկու տարի հետո դառնում է միավորված ՀԲԱ նախագահ՝ երկու տարի ժամկետով, որի ավարտից հետո համագումարը նոր Ընտրված նախագահ է ընտրում:

2. **<u>Անդամ ասոցիացիաների արդեն իսկ առկա հնարավորությունների և ազատությունների երաշխավորումը</u>**. բոլոր տեսակի նեղ մասնագիտական հարցերը՝ կլինի ուղեցույցի պատրաստում, կրթական կամ գիտական ծրագիր, պարբերական մասնագիտական գիտաժողովների իրականացում, հրատարակչական գործունեություն և այլն, կարող է իրականացնել միայն տվյալ մասնագիտական ասոցիացիան, քանի որ միայն ինքն է կոմպետենտ տվյալ ոլորտում՝ տվյալ գործունեության համար: Սրա հետ միասին, նաև մինչ այժմ ունեցած ֆինանսական ինքնուրույնությունը: Այսինքն, ՀԲԱ-ն դառնում է իրավաբանական անձանց՝ մասնագիտական ասոցիացիաների ասոցիացիա/միավորում: Ցանկացած ասոցիացիա միանալով՝ շարունակում է մնալ առանձին իրավաբանական անձ, մասնագիտական ասոցիացիա, ինչպիսին որ կա այժմ, սրան զուգահեռ դառնում է ՀԲԱ անդամ-«բաժնետեր բոլորի հետ հավասար իրավունքով», շարունակում է իրականացնել իր նախկին գործունեությունը և, ընդամենը միավորվելով ՀԲԱ շրջանակներում, ստանում է նոր հնարավորություններ՝ ամրապնդելով իր դիրքերը իր մասնագիտական ոլորտում, դառնալով իր իսկ ստեղծած շատ ուժեղ կազմակերպությունում իր մասնագիտական ոլորտի պատասխանատուն, և չկորցնելով ոչինչ՝ միայն ավելի է ուժեղանում և նոր հնարավորություն է ձեռք բերում:

3. **<u>Եվ այս բոլորը ամրագրվում է կանոնադրությամբ</u>**, որը միավորված աասոցիացիաները միասին կձևավորեն, պահպանելով վերը նշված սկզբունքները:

Առաջին քայլը պետք է լինի առաջիկա համագումարի օրը ֆիքսելը և կանոնադրական փոփոխություններն ու այլ կազմակերպական հարցերը նախապատրաստող աշխատանքային խումբ ձևավորելը:

Ուստի առաջարկում եմ, որ յուրաքանչյուր ասոցիացիա քննարկի իր ղեկավար կազմում նորացվող Հայկական բժշկական ասոցիացիային անդամակցելու հարցը՝ վերը նշված սկզբունքներն հիմք ընդունելով, և մինչև ապրիլի 15-ը տեղեկացնի այդ մասին:

Ցանկացած խնդրահարույց հարց կարող ենք համատեղ քննարկել և լուծել միասին:

Առավել մանրամասն հիմնավորումը, ներկայացվում է առանձին:

Հարգանքով,

ՀԲԱ նախագահ Ա.Սողոյան